ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՇՀԾՁԲ-2/1-1>>

ք. Երևան « 11 » «04» 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն, այսուհետև՝ Կատարող, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 47 300 000 (քառասունյոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011127066 ՀՎՀՀ 00804008 ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի ք. Երևան, Սեբաստիա 23բն.14 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050932189441001 ՀՎՀՀ 32530056
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 1
N ՇՀԾՁԲ-2/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համար	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	Առավելագույն գին/ՀՀդրամ/	Գնման ժամանակացույց
1	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	17 500 000	Ծառայությունների մատուցումը 2017թ-ի 2,3 և 4-րդ եռամսյակների ընթացքում ըստ ՀՀ ԶՈՒ ՄՊՎ հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ-ից
2	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Տ-127-ի նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	4 000 000	
3	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՌՀԿ նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	13 300 000	
4	Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	1 500 000	
5	Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ 'Ալֆա' նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	1 200 000	
6	Զորային նորոգում (Շարժական կայանքների նորոգում)	Հրաձգարանային սարքավորումների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	8 000 000	
7	Զորային նորոգում (Լիցքավորման սարքի նորոգում)	Լիցքավորման սարքի փաստացի անսարքությունների վերացում, անսարք դետալների փոխարինում և վերանորոգում:	500 000	
8	Զորային նորոգում (Տրանսֆորմատորի նորոգում)	2.5-10կվտ հզորության չոր տիպի եռաֆազ և միաֆազ տրանսֆորմատոր-ների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք հանգույցների փոխարինում:	500 000	
9	Զորային նորոգում (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68)	Մալուխների միացման համար նախատեսված մեկուսիչի փոխարինում:	200 000	
10	Զորային նորոգում (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ)	Մեկուսիչի վրա հավաքված բաժանարարների, երկկողմանի հաղորդիչների փոխարինում:	200 000	
11	Զորային նորոգում (Էլեկտրական հանգույցի նորոգում)	Էլ. հանգույցի փոխարինում:	400 000	

Վերանորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ՄՊ վարչության հայտերի և պահանջարկի համաձայն:

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումը իրականացվում է ՀՀ ԶՈՒ ՄՊՎ հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն, կազմակերպության արտադրամասում, բացառությամբ N6 չափաբաժնով ներկայացված <<Շարժական կայանքների վերանորոգում>> անվանատողով ծառայությունների, որը իրականացվում է զորամասերի հրաձգարաններում:

Ծառայությունների միավորի գներ

1.Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)

ՀՀ դրամ

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	ՄԷ 255, 12V, 20W շարժիչի փոխարինում	հատ	10000
2.	ՄԷ 255, 12V, 20W շարժիչի նորոգում	հատ	1000
3.	ՄԷ 255, 12V, 20W շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1200
4.	SAV1340LRD շարժիչի փոխարինում	հատ	17000
5.	SAV1340LRD շարժիչի նորոգում	հատ	3000
6.	SAV1340LRD շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1000
7.	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	7000
8.	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	2000
9.	Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում	հատ	500
10.	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1800
11.	Ապահովիչի փոխարինում	հատ	300
12.	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2700
13.	Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2500
14.	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	2500
15.	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2800
16.	Խոցման շղթայի անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2000
17.	Իրանի մեխանիկական վնասվածքի վերանորոգում	հատ	1800
18.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	500
19.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով	սմ	700
20.	Իրանի ներկում	հատ	2000
21.	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	3000
22.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2000
23.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	500
24.	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1000
25.	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	500
26.	Շուռտվինշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2000
27.	Շուռտվիկշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում	հատ	2000
28.	Շուռտվիկշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	1000
29.	Ամբարձիչի տանող ատամնանիվի փոխարինում	հատ	14000
30.	Իմպուլսային (սնուցման) բլոկի փոխարինում	հատ	6000
31.	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	20000
32.	Դ816 դիոդի փոխարինում	հատ	1400

33.	ՌԷՍ-22 ռելեի փոխարինում	հատ	3500
34.	Ռելե 24վ փոխարինում	հատ	2800
35.	КД209 դիոդի փոխարինում	հատ	2000
36.	1000մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1300
37.	470մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
38.	220մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
39.	47մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
40.	0,22մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	800
41.	2,2մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
42.	КОК202Ն տիրիստորի փոխարինում	հատ	2500
43.	1N 4007 դիոդի փոխարինում	հատ	1000
44.	IRF 830 տրանզիստորի փոխարինում	հատ	2000
45.	IRF 840 տրանզիստորի փոխարինում	հատ	2000
46.	VT 151 տիրիստորի փոխարինում	հատ	2000
47.	13007 տրանզիստորի փոխարինում	հատ	2000
48.	13005 տրանզիստորի փոխարինում	հատ	800
49.	Կերամիկական դիմադրության փոխարինում	հատ	2000
50.	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	500
51.	Տպագիր պլատայի ուղղում	հատ	300
52.	Էլեկտրոնային տրանսֆորմատորի փոխարինում՝ ՓԻՔ 128 509	հատ	3500
53.	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	1000
54.	Միկրոանջատիչի կայունակի փոխարինում	հատ	1000
55.	Դիմադրության փոխարինում	հատ	800
56.	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	3000
57.	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5000
58.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի գսպանակի փոխարինում	հատ	1500
59.	РП-14-30 հանգույցի փոխարինում	հատ	2000
	Ընդամենը՝ 163000		

2 Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	РА250 շարժիչի փոխարինում	հատ	40000
2.	РА250 շարժիչի նորոգում	հատ	6000
3.	РА250 շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	3000
4.	УЛ062 շարժիչի փոխարինում	հատ	28000

5.	УЛ062 շարժիչի նորոգում	հատ	4000
6.	УЛ062 շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	3500
7.	СВВ 60 կոնդենսատորի փոխարինում	հատ	2700
8.	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	1800
9.	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	1800
10.	Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում	հատ	600
11.	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1800
12.	Ապահովիչի փոխարինում	հատ	300
13.	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2700
14.	Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2500
15.	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	2500
16.	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2800
17.	Խոցման շղթայի անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2000
18.	Իրանի մեխանիկական վնասվածքի վերանորոգում	հատ	2000
19.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	500
20.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով	սմ	700
21.	Իրանի ներկում	հատ	3000
22.	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	5000
23.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	3000
24.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	1000
25.	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1500
26.	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	500
27.	Շուտովիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	5000
28.	Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում	հատ	3000
29.	Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	2000
30.	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	18000
31.	Ղեկավարման բլոկի փոխարինում	հատ	20000
32.	Դ816 դիոդի փոխարինում	հատ	1800
33.	ՌԷՍ-22 ռելեի փոխարինում	հատ	3000
34.	Ռելե 24վ փոխարինում	հատ	2800
35.	КД209 դիոդի փոխարինում	հատ	2000
36.	1000մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1300
37.	470մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	500
38.	220մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
39.	47մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
40.	0,22մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	800
41.	2,2մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
42.	КՈՒ202Ն տիրիստորի փոխարինում	հատ	2500
43.	1N 4007 դիոդի փոխարինում	հատ	1000
44.	VT 151 տիրիստորի փոխարինում	հատ	2000
45.	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	500

46.	Տպագիր պլատայի ուղղում	հատ	500
47.	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	3000
48.	Միկրոանջատիչի կալունակի փոխարինում	հատ	500
49.	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	5000
50.	BT 138 սիմիստորի փոխարինում	հատ	2000
51.	TC 106 սիմիստորի փոխարինում	հատ	2000
52.	ՓԻՔ 168622 պրոցեսորի փոխարինում	հատ	4000
53.	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2000
54.	Ամբարձիչի թևիկի փոխարինում	հատ	1500
55.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի երկար զսպանակի փոխարինում	հատ	4000
56.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի կարճ զսպանակի փոխարինում	հատ	1500
57.	ՊՊ-14-30 հանգույցի փոխարինում	հատ	2000
Ընդամենը՝ 220400			

3 Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՌՀԿ նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	ՄԷ255,12V, 20W շարժիչի փոխարինում	հատ	10000
2.	ՄԷ255,12V, 20W շարժիչի նորոգում	հատ	100
3.	ՄԷ 255, 12V, 20W շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1500
4.	SAV1340LRD շարժիչի փոխարինում	հատ	13000
5.	SAV1340LRD շարժիչի նորոգում	հատ	1000
6.	SAV1340LRD շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	100
7.	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	3000
8.	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	500
9.	Փոխանցման տուփի մեկ հեղուսի փոխարինում	հատ	400
10.	Ապահովիչի փոխարինում	հատ	200
11.	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1000
12.	Սնուցման հանգույցի լրակազմի փոխարինում(միացման հանգույց, էլ.հաղորդալար, մարտկոց, իրան)	հատ	2500
13.	Գիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2000
14.	Գիշերային նմանակման հանգույցի և էլ.հաղորդալարի փոխարինում	հատ	2300
15.	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	1800
16.	Խոցման շղթայի հանգույցի և էլ.հաղորդալարի փոխարինում	հատ	2300
17.	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2500
18.	Ալեհավաքի փոխարինում	հատ	500
19.	Ալեհավաքի բնիկի փոխարինում	հատ	1000

20.	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	2000
21.	Իրանի մեխանիկական վնասվածքի վերանորոգում	հատ	1500
22.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	500
23.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով	սմ	700
24.	Իրանի ներկում	հատ	1500
25.	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	3000
26.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2000
27.	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	500
28.	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1000
29.	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	100
30.	Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2000
31.	Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում	հատ	2800
32.	Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	1000
33.	Ամբարձիչի տանող ատամնանիվի փոխարինում	հատ	13000
34.	Ամբարձիչի տակդիրների պատրաստում	հատ	2000
35.	Իրանի ներկում	հատ	1500
36.	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	1000
37.	Միկրոանջատիչի կալունակի փոխարինում	հատ	1000
38.	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	500
39.	Մարտկոցների իրանի փոխարինում	հատ	500
40.	Մեկ մարտկոցի փոխարինում (6Վ,4,5 Ա)	հատ	4000
41.	Մեկ մարտկոցի փոխարինում (12Վ,4,5 Ա)	հատ	8000
42.	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	20000
43.	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	500
44.	Դիմադրության փոխարինում	հատ	1000
45.	КЭ 829 Ա տրանզիստորի փոխարինում	հատ	2500
46.	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2500
47.	4 մհց ռեզոնատորի փոխարինում	հատ	2000
48.	46,315 մհց ռեզոնատորի փոխարինում	հատ	2500
49.	ՓԻՔ 16F622 պրոցեսորի փոխարինում	հատ	3200
50.	455 КՀՑ ռեզոնատորի փոխարինում	հատ	2000
51.	54Ընդունիչ МУ3371-ի փոխարինում	հատ	3200
52.	Պեզոֆիլտրի փոխարինում	հատ	2500
53.	ՈՒժեղացուցիչ հաղորդալարի փոխարինում	հատ	700
54.	ՈՒժեղացուցիչ 1407ՈՒԴՆ-ի փոխարինում	հատ	2800
55.	Էլ.սխեմայի միացման հանգույցի (ՊՊ – 14 – 16) փոխարինում	հատ	1500
56.	Դիոդի փոխարինում	հատ	700
57.	Միկրոսխեմայի բնիկի փոխարինում	հատ	2000

58.	Ինդուկցիոն կոնտուրի փոխարինում	հատ	800
59.	Տպագիր պլատայի ուղղում	հատ	300
	Ընդամենը՝ 146500		

4 Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Մեկնարկիչի (ТУМБЛЕР ПУСК) փոխարինում	հատ	2000
2.	Սեղմակի փոխարինում	հատ	2000
3.	Ալեհավաքի փոխարինում	հատ	4000
4.	Ալեհավաքի բնիկի փոխարինում	հատ	1000
5.	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	1800
6.	Մեկ մարտկոցի փոխարինում	հատ	4000
7.	Մեկ ռադիոմալուխի փոխարինում	հատ	600
8.	Ռադիոմալուխի մեկ միացման հանգույցի փոխարինում	հատ	1000
9.	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	1500
10.	Ռելե 12 վոլտ փոխարինում	հատ	2000
11.	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	500
12.	Կոնդենսատորի փոխարինում	հատ	700
13.	Ինդուկցիոն կոնտուրի փոխարինում	հատ	2000
14.	Ռեզիստորի փոխարինում	հատ	700
15.	Փոփոխական ռեզիստորի փոխարինում	հատ	1000
16.	ԿՏ 368 տրանզիստորի փոխարինում	հատ	2000
17.	ԿՏ 315 տրանզիստորի փոխարինում	հատ	1500
18.	Ինդուկտիվ կոճի փոխարինում	հատ	800
19.	Վարիկապի փոխարինում	հատ	1000
20.	ԿՏ 646տրանզիստորի փոխարինում	հատ	2000
21.	ԿՏ 920Ա տրանզիստորի փոխարինում	հատ	6000
22.	ԿՏ 920Բ տրանզիստորի փոխարինում	հատ	6000
23.	ԿՏ 972Ա տրանզիստորի փոխարինում	հատ	2500
24.	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում	հատ	3000
25.	4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում	հատ	1500
26.	ԿՏ 162 Ա ստաբիլիտրոնի փոխարինում	հատ	1000
27.	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2000
28.	1015ՊԼ4 սինտեզատորի փոխարինում	հատ	2000
29.	Լուսադիոդի փոխարինում	հատ	200
30.	Տպագիր պլատայի ուղղում	հատ	500
31.	Ռադիոհրահանգների ձևավորման բլոկի փոխարինում	հատ	10000
32.	Ռադիոհաղորդիչ բլոկի փոխարինում	հատ	8000

33.	Իրանի ներկում	հատ	1000
Ընդամենը՝ 75800			

5 Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ 'Ալֆա' նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	4000
2.	Սեղմակի փոխարինում	հատ	3000
3.	Տումբլեռի փոխարինում	հատ	3000
4.	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	3500
5.	Սնուցման բլոկի փոխարինում	հատ	5000
6.	Սնուցման բլոկի նորոգում	հատ	3000
7.	Տրանսֆորմատորի փոխարինում	հատ	5000
8.	Կառավարման բլոկի փոխարինում	հատ	20000
9.	Կառավարման բլոկի նորոգում	հատ	3000
10.	Հետադարձ ինֆորմացիայի բլոկի փոխարինում	հատ	12000
11.	Հետադարձ ինֆորմացիայի տպագիր պլատայի ուղղում	հատ	1600
12.	Գիշերային նմանակման բլոկի փոխարինում	հատ	4500
13.	Գիշերային նմանակման բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1500
14.	Ավտոմատ ռեժիմի բլոկի փոխարինում	հատ	20000
15.	Ավտոմատ ռեժիմի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	2000
16.	Ձայնային ազդարման բլոկի փոխարինում	հատ	16000
17.	Ձայնային ազդարման բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1500
18.	Վայրկյանաչափի բլոկի փոխարինում	հատ	5000
19.	Վայրկյանաչափի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1500
20.	ՖՊՌ-ի բլոկի փոխարինում	հատ	4000
21.	ՖՊՌ-ի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1500
22.	Հետադարձ ինֆորմացիայի ցուցիչի փոխարինում	հատ	3000
23.	ԿՏ 972 Ա տրանզիստորի փոխարինում	հատ	1500
24.	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	1500
25.	Ռելե 12 վոլտ փոխարինում	հատ	1500
26.	ՍԴ 4094 միկրոսխեմայի փոխարինում	հատ	800
27.	Դիմադրության փոխարինում	հատ	500
28.	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում	հատ	3500
29.	ՓԻՔ 16Ֆ622 պրոցեսորի փոխարինում	հատ	3500
30.	1000 մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	800
31.	47 մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	800
32.	ՏԴԱ 1557 Ք միկրոսխեմայի փոխարինում	հատ	4500
33.	ԼՄ 358 ԱՆ միկրոսխեմայի փոխարինում	հատ	1500
34.	Կ 561 ԼԱ 7 միկրոսխեմայի փոխարինում	հատ	1500
35.	1N 4007 դիոդի փոխարինում	հատ	1000
36.	4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում	հատ	1500
37.	UOS 101 օպտրոնի փոխարինում	հատ	1500
38.	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	500
39.	ՌՊ հանգույցի փոխարինում	հատ	2000
40.	ՇՌ հանգույցի փոխարինում	հատ	2500
Ընդամենը՝ 154500			

6 Զորային նորոգում (Շարժական կայանքների նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	22 ԿՎտ,930 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	140000
2.	7,5 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	120000
3.	5,5 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	100000
4.	3 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	60000
5.	2,2 ԿՎտ,960 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	58000
6.	1,5 ԿՎտ,950 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	30000
7.	0,75 ԿՎտ,2750 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	16000
8.	0,5 ԿՎտ, 2750 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	15000
9.	Շարժաբերի փոխարինում	հատ	300000
10.	Շարժաբերի մեկ փոկանիվի փոխարինում	հատ	16000
11.	Հենարանով փոկանիվի փոխարինում	հատ	20000
12.	Փոխանցման տուփի նորոգում	հատ	30000
13.	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	12000
14.	Փոխանցման տուփի մեկ լիսեռի փոխարինում	հատ	10000
15.	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	3000
16.	Հենարանային առանցքակալի փոխարինում	հատ	10000
17.	Փոկի փոխարինում	հատ	3000
18.	Շարժիչի մեկ փոկանիվի փոխարինում	հատ	4800
19.	Էլեկտրական վահանակի փոխարինում	հատ	70000
20.	Տումբլեռի փոխարինում	հատ	2500
21.	Մագնիսական թողարկիչի փոխարինում	հատ	30000
22.	Ավտոմատ անջատիչի փոխարինում	հատ	35000
23.	Ռևեռսի պլատայի փոխարինում	հատ	11000
24.	Ռևեռսի պլատայի նորոգում	հատ	2000
25.	Ջերմոռելեյի փոխարինում	հատ	5000
26.	Արգելակման համակարգի փոխարինում	հատ	32000
27.	Արգելակման համակարգի նորոգում	հատ	7000
28.	Սայլակի փոխարինում	հատ	180000
29.	Սայլակի նորոգում	հատ	5000
30.	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ17սմ	հատ	22000
31.	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ19սմ	հատ	30000
32.	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ22սմ	հատ	36000
33.	Մեկ ռետինե անիվի փոխարինում	հատ	4000
34.	Ծայրային անջատիչի փոխարինում	հատ	35000
35.	Ծայրային անջատիչի նորոգում	հատ	4000
36.	Ծայրային անջատիչի կալունակի փոխարինում	հատ	12000
37.	6 մմ ճոպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	600
38.	8 մմ ճոպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	650
39.	10 մմ ճոպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	700
40.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	500
41.	Էլեկտրաեռակցման աշխատանքներ խողովակների համար1սմ կարի հաշվարկով	սմ	700
42.	Իրանի ներկում	հատ	6000
43.	Ճոպանի ծգվածության մեխանիզմի(կարապիկ) փոխարինում	կ-տ	22000
	Ընդամենը՝ 1501450		

7 Զորային նորոգում (Լիցքավորման սարքի նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Սնուցման բլոկի փոխարինում	հատ	5000

2.	Կառավարման բլոկի փոխարինում	հատ	7000
3.	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2000
4.	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1500
5.	Ապահովիչի փոխարինում	հատ	500
6.	Տոմբլեռի փոխարինում	հատ	2000
7.	Լուսադիոդի փոխարինում	հատ	500
8.	Տպագիր պլատայի ուղղում	հատ	500
9.	Իրանի փոխարինում	հատ	6000
Ընդամենը՝ 25000			

8 Զորային նորոգում (Տրանսֆորմատորի նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	ՏԱՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	52000
2.	ՏԱՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	50000
3.	ՏԱՋ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	28000
4.	ՏԱՋ 380/220,4 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	26000
5.	ՏԱՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	12000
6.	ՏԱՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	18000
7.	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	28000
8.	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	23000
9.	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	18000
10.	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	13000
11.	ՏԱՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	118000
12.	ՏԱՋ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	58000
13.	ՏԱՋ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	40000
14.	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	40000
15.	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	36000
Ընդամենը՝ 560000			

9 Զորային նորոգում (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Բաշխման տուփի փոխարինում	հատ	1900
2.	Բաշխման տուփի կափարիչի փոխարինում	հատ	1000
3.	Բաշխման տուփի մեկուսիչի փոխարինում	հատ	1000
Ընդամենը՝ 3900			

10 Զորային նորոգում (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Բաժանարար տուփի փոխարինում	հատ	1800
Ընդամենը՝ 1800			

11 Զորային նորոգում (Էլեկտրական հանգույցի նորոգում)

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի Գինը
1.	Սնուցման հանգույցների փոխարինում	հատ	2700
2.	Հետադարձ ինֆորմացիայի և գիշերային նմանակման հանգույցների փոխարինում	հատ	2500
Ընդամենը՝ 5200			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 2
N ՇՀԾՁԲ-2/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ								
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր
1	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)	50841200/1/4/1	7612500	7612500	7612500	15225000	15225000	15225000	17500000	17500000	17500000
2	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Տ-127-ի նորոգում)	50841200/2/4/1	2320000	2320000	2320000	2320000	2320000	2320000	4000000	4000000	4000000
3	Զորային նորոգում (Թիրախային ամբարձիչ ՌՀԿ նորոգում)	50841200/3/4/1	3857000	3857000	3857000	3857000	3857000	3857000	13300000	13300000	13300000
4	Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)	50841200/4/4/1	652500	652500	652500	652500	652500	652500	1500000	1500000	1500000
5	Զորային նորոգում (Ղեկավարման վահանակ 'Ալֆա' նորոգում)	50841200/5/4/1	348000	348000	348000	348000	348000	348000	1200000	1200000	1200000

6	Զորային նորոգում (Շարժական կայանքների նորոգում)	50841200/6/4/1	3180000	3180000	3180000	6360000	6360000	6360000	8000000	8000000	8000000
7	Զորային նորոգում (Լիցքավորման սարքի նորոգում)	50841200/7/4/1	217500	217500	217500	217500	217500	217500	500000	500000	500000
8	Զորային նորոգում (Տրանսֆորմատորի նորոգում)	50841200/8/4/1	217500	217500	217500	217500	217500	217500	500000	500000	500000
9	Զորային նորոգում (Բաշխման տուփի նորոգում) (ՇՄ-68)	50841200/9/4/1	87000	87000	87000	87000	87000	87000	200000	200000	200000
10	Զորային նորոգում (Բաժանարար տուփի նորոգում) (ԿՇԿ)	50841200/10/4/1	58000	58000	58000	58000	58000	58000	200000	200000	200000
11	Զորային նորոգում (Էլեկտրական հանգույցի նորոգում)	50841200/11/4/1	100000	100000	100000	100000	100000	100000	400000	400000	400000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ՊԵՊԻՍՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 3
N ՇՀԾՁԲ-2/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

“ “ “ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,_____ե 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՇՀԾՁԲ-2/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------(Պատվիրատուի անունը)----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ----------(Կատարողի անունը)----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ---------- գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. --------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն